ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ԲԴԽ-58-Ո-127
2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԴԱՏԱՐԱՆՆԵՐՈՒՄ ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ՑՈՒՑԱԿԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱՑՄԱՆ ԲԱԺԻՆՆԵՐԻ ՀԱՄԱԼՐՄԱՆ ՄԱՍԻՆ

«Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի (այսուհետ՝ Օրենք) 95-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Բարձրագույն դատական խորհուրդը մինչև յուրաքանչյուր տարվա սեպտեմբերի 1-ը հաշվարկում է հաջորդ երկու տարվա ընթացքում առաջին ատյանի դատարանում դատավորների թափուր պաշտոնների համալրման համար անհրաժեշտ դատավորների քանակը և դրա հիման վրա որոշում է կայացնում դատավորների թեկնածուների ցուցակի համապատասխան մասնագիտացման բաժնի համալրման անհրաժեշտության մասին, եթե դատավորների թեկնածուների ցուցակում առկա թեկնածուների քանակը համապատասխանաբար քրեական և քաղաքացիական մասնագիտացման բաժնում չի գերազանցում հաջորդ երկու տարում թափուր պաշտոնների կանխատեսվող քանակը չորսով, իսկ վարչական մասնագիտացման բաժնում՝ երկուսով»:

Օրենքի 110-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Բարձրագույն դատական խորհուրդն Արդարադատության ակադեմիայում ուսուցումն ավարտած դատավորների թեկնածուների հավակնորդներին ներառում է դատավորների թեկնածուների ցուցակներում՝ ըստ համապատասխան մասնագիտացումների»:

Ելնելով վերոգրյալից և հաշվի առնելով այն հանգամանքը, որ Բարձրագույն դատական խորհրդի 2018 թվականի դեկտեմբերի 20-ի թիվ ԲԴԽ-59-Ո-165 որոշմամբ դատավորների թեկնածուների հավակնորդների ցուցակում ընդգրկված քաղաքացիական մասնագիտացման թեկնածուներից **12**-ը, քրեական մասնագիտացման թեկնածուներից **5**-ը, վարչական մասնագիտացման թեկնածուներից **2**-ն Արդարադատության ակադեմիայում ուսուցումն ավարտելու են սույն թվականի հոկտեմբեր ամսին, իսկ Բարձրագույն դատական խորհրդի 2019 թվականի մայիսի 24-ի թիվ ԲԴԽ-36-Ո-83 որոշմամբ դատավորների թեկնածուների հավակնորդների ցուցակում ընդգրկված քաղաքացիական մասնագիտացման թեկնածուներից **10**-ը, քրեական մասնագիտացման թեկնածուներից **4**-ը և վարչական մասնագիտացման թեկնածուներից **2**-ը դեռևս չեն սկսել ուսուցումն Արդարադատության ակադեմիայում՝ ուստի նրանք, որպես դատավորի թեկնածուներ, չեն կարող ընդգրկվել մինչև սույն

թվականի սեպտեմբերի **1**-ը Օրենքի 95-րդ հոդվածի 2-րդ մասով կատարվելիք հաշվարկում:

Նման պայմաններում ներկայումս գործող դատավորների թեկնածուների ցուցակում, ըստ համապատասխան մասնագիտացման բաժինների, առկա են՝ քաղաքացիական մասնագիտացման բաժնում՝ **0** թեկնածու, քրեական մասնագիտացման բաժնում՝ **0** թեկնածու, վարչական մասնագիտացման բաժնում՝ **1** թեկնածու:

Հարկ է նշել, որ առաջին ատյանի դատարաններում առաջիկա երկու տարում թոշակի է անցնելու քաղաքացիական գործեր քննող **5**, քրեական գործեր քննող **6** և վարչական գործեր քննող **1** դատավոր: Բացի այդ, ներկա պահին առաջին ատյանի դատարաններում առկա է դատավորի **13** թափուր հաստիք, որից **7**-ը՝ քաղաքացիական մասնագիտացման, **6**-ը՝ քրեական մասնագիտացման:

Ամփոփելով վերոգրյալը՝ կարելի է արձանագրել, որ **01.01.2020-31.12.2021թթ.** առաջին ատյանի դատարաններում կանխատեսվում է դատավորի **12** թափուր հաստիքի առաջացում:

Այսպիսով, հաշվի առնելով այն հանգամանքը, որ դատավորների թեկնածուների ցուցակի քաղաքացիական և քրեական մասնագիտացման բաժիններում թեկնածուներ առկա չեն, իսկ վարչական մասնագիտացման բաժնում առկա թեկնածուների քանակը չի գերազանցում հաջորդ երկու տարում կանխատեսվող թափուր հաստիքների քանակը երկուսով, ուստի անհրաժեշտ է համալրել դատավորների թեկնածուների ցուցակի քաղաքացիական, քրեական և վարչական մասնագիտացման բաժինները:

Օրենքի 95-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Դատավորների թեկնածուների ցուցակի համալրման համար անհրաժեշտ թեկնածուների քանակի հաշվարկը կատարվում է հաջորդ երկու տարվա ընթացքում քրեական և քաղաքացիական մասնագիտացման բաժիններում համալրման համար անհրաժեշտ քանակը **յոթական** թեկնածուով, իսկ վարչական մասնագիտացման բաժնում՝ **երկու** թեկնածուով գերազանցող քանակի հաշվարկով»:

Վերոգրյալի արդյունքում անհրաժեշտ է դատավորների թեկնածուների ցուցակի քաղաքացիական մասնագիտացման բաժինը համալրել **12** թեկնածուով, քրեական մասնագիտացման բաժինը՝ **13** թեկնածուով, իսկ վարչական մասնագիտացման բաժինը՝ **2** թեկնածուով՝ հիմքում դնելով հետևյալ հաշվարկը.

- քաղաքացիական մասնագիտացում - (3 /2020թ. կանխատեսվող թափուր պաշտոնների քանակ/ + 2 /2021թ. կանխատեսվող թափուր պաշտոնների քանակ/ + 7 Օրենքի 95-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջ/) – 0 /ներկա պահին դատավորների թեկնածուների ցուցակում առկա թեկնածուների քանակ/).

- քրեական մասնագիտացում - (4 /2020թ. կանխատեսվող թափուր պաշտոնների քանակ/ + 2 /2021թ. կանխատեսվող թափուր պաշտոնների քանակ/ + 7 /Օրենքի 95-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջ/) – 0 /ներկա պահին դատավորների թեկնածուների ցուցակում առկա թեկնածուների քանակ/).

- վարչական մասնագիտացում - (1 /2020թ. կանխատեսվող թափուր պաշտոնների քանակ/ + 0 /2021թ. կանխատեսվող թափուր պաշտոնների քանակ/ +

2 /Օրենքի 95-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջ/) – 1 /ներկա պահին դատավորների թեկնածուների ցուցակում առկա թեկնածուների քանակ/).

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով Օրենքի 94-րդ հոդվածի 1-ին մասը և 95-րդ հոդվածի 2-րդ մասը՝ Բարձրագույն դատական խորհուրդը

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է

1. Հաստատել դատավորների թեկնածուների ցուցակի համալրման անհրաժեշտ թվաքանակը, համապատասխանաբար՝
   - քաղաքացիական մասնագիտացման բաժին՝ **12** (**տասներկու)** թեկնածու.
   - քրեական մասնագիտացման բաժին՝ **13** (**տասներեք)** թեկնածու.
   - վարչական մասնագիտացման բաժին՝ **2** (**երկու)** թեկնածու:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ
ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ **Ռ. ՎԱՐԴԱԶԱՐՅԱՆ**

2019թ. օգոստոսի 21
ք. Երևան